ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

03 Հոկտեմբերի **2018 թվականի N** 132-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ, 41-րդ հոդվածներով, 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ԲՓ 88 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» պետական փորձաքննական դրական եզրակացությունը, «ՌՈՒԲԵՆ ԵՎ ԷԴՎԻՆԱ» ՍՊ ընկերության 2018 թվականի օգոստոսի 06-ի թիվ 2 դիմումը, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի օգոստոսի 09-ի թիվ Ֆ-241/18 գրությունը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՌՈՒԲԵՆ ԵՎ ԷԴՎԻՆԱ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) 1 տարի 3 ամիս ժամկետով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/276 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ղուրսալի Խաչակապի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ղուրսալի-3 տեղամասի հարավային թևում (այսուհետ՝ Տեղամաս) հետևյալ կոորդինատներով՝ 1.X=4522619 Y=8443121, 2.X=4522660 Y=8443225, 3.X=4522657 Y=8443345, 4.X=4522610 Y=8443516, 5.X=4522599 Y=8443469, 6.X=4522572 Y=8443411, 7.X=4522564 Y=8443199 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) սահմանափակված, 2.5 հա տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

2. Կնքել Տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել Ընկերությանը՝ 5 օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը,

2) հրավիրել Ընկերությանը՝ 10-օրյա ժամկետում Պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

3) Ընկերության կողմից Պայմանագիրը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն, Պայմանագիր, լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագիր),

4) ծանուցել Ընկերությանը, որ սահմանված ժամկետներում Պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

5) սահմանված կարգով իրականացնել երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառումը՝ երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

11/3/2018

X

VERIFIED OCSP 11/3/2018 14:25:31 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
/ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ